



ՏԵՆԻՍ ՓԱՓԱՁԵԱՆ
(1931–2023)

Ամերիկահայ պատմաբան, դոկտոր Տենիս Փափազեան ծնած էր 15 Դեկտեմբեր 1931ին, Օկիլաթա (Ճորճիա նահանգ), պոլսահայ ընտանիքի մը մէջ: 1940ականներուն ընտանիքով փոխադրուած է Տիթթորթ (Միշիկըն նահանգ): Աւարտած է Ուէյն նահանգային համալսարանը (Տիթթորթ) եւ մագիստրական ու դոկտորական աստիճանները (1966) ստացած Միշիկըն համալսարանէն (էնն Արպըր), մասնագիտանալով ռուսական պատմութեան մէջ: Աւարտաճառը նուիրուած էր ԺԹ. դարու ռուս պատմաբան Նիկոլայ Կոստոմարովին: Պաղ պատերազմի տարիներուն Խորհրդային Միութեան մէջ ուսանած ԱՄՆի առաջին գիտնականներէն եղած է ան: Նկատուած է ռուսական եւ նախկին Խորհրդային Միութեան հեղինակաւոր փորձագէտներէն:

1962ին Միշիկըն վերադառնալով, Ուզպեկիստանի մէջ օդանաւային անկումէ մը հազիւ ազատելէ ետք, մաս կազմած է Միշիկընի համալսարանի (Տիրպորն) ուսուցչական կազմին, դասաւանդելով մինչեւ 2006: 1971ին ստացած է պատմութեան փրոֆեսորի աստիճան: Դասախօսած է ռուսական եւ հայոց պատմութեան, պատմագիտութեան, համաշխարհային պատմութեան, եւրոպական պատմութեան եւ ԱՄՆի դիւանագիտական պատմութեան մասին: Համալսարանի ընկերային գիտութիւններու բաժանմունքի (1966-69) ու արուեստի, գիտութիւններու եւ գրականութեան դպրոցի (1969-73) վարիչ եղած է: Վարչական այլ պաշտօններու կարգին, շրջանաւարտներու ուսմանց տնօրէն եղած է (1979-85): Ունեցած է ամերիկեան կառավարութենէն բազմաթիւ պարգեւատրումներ՝ իր գիտական-վարչական գործունէութեան համար: Մաս կազմած է ամերիկեան գիտական ու հասարակական տարբեր կազմակերպութիւններու վարիչ մարմիններուն:

Տենիս Փափազեան նաեւ աշխուժ գործունէութիւն ունեցած է ամերիկահայ համայնքին մէջ: «Վարդանանց ասպետներ» կազմակերպութեան երկարամեայ անդամ եղած է, որուն «Նարեկ» օթեակի հրամանատարը եղած է 1988-89ին, իսկ կազմակերպութեան ընդհանուր սպարապետը՝ 2010-12ին: «Վարդանանց ասպետներ»ու աջակցութեամբ, հիմնած է Միշիկընի համալսարանի (Տիրպորն) Հայկական հետազօտութեան կեդրոնը, որուն վարիչը եղած է 1985էն մինչեւ հանգստեան կոչուիլը 2006ին: Զուգահեռաբար, նախագահած է Հայագիտական ուսմանց ընկերակցութիւնը (1988-91, 1997-2001) եւ խմբագրած անոր հանդէսը՝ *Journal of the Society for Armenian Studies* (1995-2001):

Փափազեան Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ երիտասարդական կազմակերպութեան գործօն անդամներէն եղած է, իսկ անլի ուշ՝ Հայց. եկեղեցւոյ արեւելեան թեմի (էջմիածնական) թեմական խորհուրդի

